

---

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Թ. Ա. VI – IV ԴԴ.

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

*Տարածաշրջանի առավել կարևոր դերակատարում ունեցող գերտերությունների (Ասորեստան, Վանի թագավորություն) համարյա միաժամանակ անկումից հետո ինքնահաստատվեցին նախ Մարաստանն ու Հայաստանը, ապա և Պարսկաստանը: Հզորացող հարևանների միջև ընթացող քաղաքական անզիջում պայքարի մթնոլորտում հայկական նորաստեղծ պետականությունը՝ Երվանդունիների առաջին թագավորության շրջանում, հակազդելու ճիգեր էր գործադրում փոփոխակի հաջողությամբ:*

*Երկրի ռազմաքաղաքական հզորության ներուժի աստիճանը, առաջին հերթին, պայմանավորված է ներքին կազմակերպվածության և տնտեսության զարգացման մակարդակով: Այս ժամանակաշրջանում տնտեսության մեջ վճռորոշ էր գյուղատնտեսության հիմնարար դերը:*

*Գիտական շրջանառության մեջ եղած հնագիտության, հնէաբուսաբանության, հնէակենդանաբանության առկա տվյալների, ինչպես նաև գրավոր աղբյուրների ու ազգագրական նյութերի համեմատական վերլուծությամբ փորձենք բացահայտել Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ընթացքը՝ Երվանդունիների առաջին թագավորության և Աքեմենյան սատրապության ժամանակաշրջանում (մ. թ. ա. VI–IV դդ.)<sup>1</sup>:*

*Հայաստանի պատմության այս ժամանակաշրջանում Երվանդունիներին վերաբերող հնագիտական նյութի ուսումնասիրության առկա մակարդակը հնարավորություն չի տալիս այն հստակորեն տարանջատել սատրապականից: Նորաստեղծ սատրապական վարչակազմի կենտրոնների շարքում հանդես են գալիս վանտոսայան վերակառուցված խոշոր ամրոց-բնակավայրեր (Էրեբունի, Արմավիր, Ոսկերչուր-Ալթինթեփե և այլն): Ըստ ունեցած տվյալների՝ ակնհայտ է, որ վերականգնվում են նաև սրանց մերձակա գյուղատնտեսական տարածքների, նախորդ շրջանից ժառանգված, արհեստական ռոտզման համակարգերը: Արմավիրին՝ վանտոսայան երկամրոցանի Արգիշտիիսինիլիի դեռևս կանգուն արևելյան ամրոցին, ջուր էին մատակարարում Երասխի հովտի ռոտզման հզոր բազմաձյուղ ցանցի որոշ ուղեգծեր<sup>2</sup>: XVIII սատրապության վարչական կենտրոններից մեկի՝*

---

<sup>1</sup> Գ. Ա. Տիբաջյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար). – ՊԲՀ, 1980, № 4, էջ. 84–95, ն ու յ ն ի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – III դ. վերջ). – ՊԲՀ, 1981, № 2, էջ 68–84:

<sup>2</sup> Ռոտզման ցանցի մասին տե՛ս Կ. Ղաֆադյան. Արգիշտիիսինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984, էջ 22–28: Ամրոցից հյուսիս-արևմուտք (ներկայիս Բամբակաշատ գյուղի ծայրամասում) բացահայտված է գյուղատնտեսական տարածքի մի

Էրեբունիի ցանքատարածքներն ու բանջարանոցները, խաղողի և պտղատու այգիները ոռոգվում էին Արգիշտի I-ին վերագրվող ջրանցքով՝ Հրազդան գետից (Թոխմախ) լիճ-ջրամբարում կուտակված ջուրը բախշող բազմաձյուղ առուներով<sup>3</sup>: Կործանված Թեյշեբաինի քաղաք-ամրոցի մերձակայքում ձևավորված նոր բնակավայրի դաշտերը ոռոգվում էին Ռուսա II-ի կառուցած, Հրազդանից սկիզբ առնող «Ումեշե» ջրանցքի<sup>4</sup> ջրերով:

Վարչաքաղաքական գլխավոր կենտրոնի կարգավիճակը դեռևս պահպանած Վան-Տոսպը նախորդ շրջանի մի շարք հաղորդակից (Հայկաբերդ, Ջեռնակի բլուր, Արծկե, Ներքին խնձոր և այլն)<sup>5</sup> ամրոց-բնակավայրերի հետ շարունակում էր վերահսկել Վանա լճի արգավանդ ավազանը՝ արհեստական ոռոգման համակարգի վիթխարի ցանցով (Շամիրամի, Բերկրիի, Արծկեի և այլ ջրանցքներ): Այս համակարգն ապահովում էր գյուղատնտեսության բնականոն, արդյունավետ զարգացումը:

Կյանքի շարունակական ընթացքը հնագիտորեն վավերացված է նաև Մշո-Մանազկերտի-Բասենի դաշտերում<sup>6</sup>, այն է՝ մ. թ. ա. V-IV դդ. սահմանաեզրին «մեծ և հարուստ» Արմենիայով «Բյուրի նահանջի» անցած ճանապարհը<sup>7</sup>: Ըստ Քսենոփոնի նկարագրության՝ այստեղ՝ Կենտրիտեսի՝ Արևմտյան Տիգրիսի ակունքներից դեպի Արածանի-Մեղրագետի, ապա Արածանիի և Արաքսի վերին հոսանքի ավազաններում, հայկական գյուղերը ներկայանում են առատ ու բազմազան գյուղմթերքով լի բարեկարգ տներով: Այսինքն՝ դեռևս վանտոսայան ժամանակներից գինու և հացահատկի վիթխարի շտեմարաններով հարուստ այս շրջաններում շարունակում են զգալի հզորությամբ գործել արհեստական ոռոգման նախկին ցանցերը:

Սատրապության վարչական կենտրոնի վերածված Ալթինթեփեի վանտոսայան հզոր ամրոց-բնակավայրի<sup>8</sup> գյուղատնտեսական տարածքը Երզնկայի ջրառատ և արգասաբեր դաշտն էր՝ Արևմտյան Եփրատի հովտում, ջրանցքների իր ցանցով:

հատված՝ շինարարական մնացորդներ, «ուրարտա-աքեմենյան» խառը խեցեղեն, մեծ, տարողունակ կարասներ (տե՛ս А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили. Ереван, 1974, с. 55):

<sup>3</sup> Գ. Ռ. Մ ու շ ե ղ յ ա ն. Ջրամատակարարման հարցը Էրեբունիում և Թեյշեբաինիում. – ՊԲՀ, 1971, №1, էջ 207–211:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 211 և այլն:

<sup>5</sup> Գ. А. Т и р а ц я н. Новые археологические материалы послеурартского времени на территории западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры. – Древний Восток, 2. Ереван, 1976, с. 148–157; G. D. S u m m e r s. Archaeological Evidence for the Achaemenid Period in Eastern Turkey. – Anatolian Studies, vol. XLIII, 1993, p. 85–86, 88.

<sup>6</sup> Մշո դաշտի հնագիտական քարտեզը տե՛ս M. R o t h m a n. Beyond the Frontiers; Muş in the Late Bronze to Roman Period. – A View from the Highlands. Peeters, 2004, p. 148, map 2 (b); Գ. А. Т и р а ц я н. Նշվ. աշխ., էջ 148–149; G. D. S u m m e r s. Նշվ. աշխ., էջ 86; A. P a r k e r. Northeastern Anatolia: on the Periphery of Empires. – Anatolian Studies, vol. 49, 1999, p. 134–138.

<sup>7</sup> Քարտեզը տե՛ս Ք ո չ ա ռ յ ա ն. Անաբասիս. Թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Անաբասիս), Երևան, 1970:

<sup>8</sup> G. D. S u m m e r s. Նշվ. աշխ., էջ 88 և այլն:

Հնագիտորեն փաստված է նաև առավել վաղ շրջանից՝ առնվազն մ. թ. ա. I հազ. սկզբներից, գործող ջրագծերի առկայությունը, ինչպես՝ Սևանի ավազանի հարավում՝ Մարտունի գետի հովտում, «Գերու» ջրանցքի ճյուղավորված համակարգը<sup>9</sup>: Իսկ Շիրակում ոռոգման բազմաճյուղ ցանցի առկայությունը անուղղակիորեն վկայված է վանտոսայան արքաների սեպագիր արձանագրություններում՝ հացառատ ամբարների կողպուտի մասին տեղեկատվությամբ<sup>10</sup>: Գուգարքի լեռնազանգվածի պաշտպանական համակարգի (այսուհետև՝ ԳՊՀ)՝ Դերեղի, Արչիսի, Աղստևի, Հախումի և Տավուշի գետահովիտների ամրոց-բնակավայրերի պարբերական վերակառուցումներն ու նորերով համալրումները վկայում են այստեղ (մ. թ. ա. III հազ. ի վեր ներառյալ մ. թ. ա. VI–IV դդ.) կյանքի զոյատևման փաստը<sup>11</sup>: Այս հանգամանքը և գյուղատնտեսության զարգացման բարձր աստիճան հավաստող հնագիտական առատ նյութի առկայությունը հիմք են տալիս Գուգարքում ևս, ժամանակի քաղաքակրթության մակարդակին համահունչ, ոռոգման ցանցերի ներկայություն տեսնել (անշուշտ, այս տեսակետը կարոտ է լրացուցիչ հնագիտական փաստերի): Կուր-արաքսյան հարթավայրի Միլի-Մուդանի տափաստաններում առկա հին ջրանցքների ուղեգծերը, որոշ ուսումնասիրողներ, վերագրում են մ. թ. ա. V–IV դդ. գործող արհեստական ոռոգման «բարդ... համակարգին»<sup>12</sup>:

Միով բանիվ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ակնհայտ է շերտագրական հաջորդականությամբ փաստված, գործող ոռոգման համակարգերի շարունակական զարգացման համընդհանուր պատկեր:

Շարունակաբար առավել բնակեցված էին գետերի ու լճերի անընդմեջ յուրացվող արգավանդ ավազաններն և լեռնալանջերը: Ըստ հնէաբուսաբանական հետազոտությունների տվյալների՝ այս ոռոգելի ու բարեբեր հողերում աճեցվել են բազմաշարք գարի, խոշորահատ ցորենի փափուկ տեսակ, տարեկան, հաճար, կորեկ<sup>13</sup> և այլն: Գյումրիի «Սև բերդի» հետուրարտական շերտում բացահայտված ցորենի, աճառի, գարու հատիկները կրում են կալսման և «ծեծման» հետքեր<sup>14</sup>:

Նորօրյա ուսումնասիրությունները հավաստում են Մանթաշ գետի հովտում՝ Հոռումի բազմաշերտ բնակավայրի տևական գոյության ու շրջան-վաղ երկաթ-վանտոսայան շրջափուլերում, ցորենի և գարու համատեղ ցանքսի ագրոտեխնի-

<sup>9</sup> Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Հ. Մ ա ն ա մ յ ա ն. Սևանա լճի հարավային ավազանի պաշտպանական համակարգի մասին.– Հին հայաստանի մշակույթը, XI, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1998, էջ 42:

<sup>10</sup> Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Շիրակը սեպագիր աղբյուրներում.– Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 55:

<sup>11</sup> Տե՛ս С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении (III – I тыс. до н. э.). Ереван, 1976, с. 15–98, 211–224; Բ. Ա. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն. Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI–IV դդ., Երևան, 2003, էջ 11–16:

<sup>12</sup> Д ж. Х а л и л о в. Материальная культура Кавказской Албании. Баку, 1985, с. 162–164.

<sup>13</sup> Տե՛ս С. А. Е с а я н. Նշվ. աշխ., էջ 165:

<sup>14</sup> Մ. Տ ե ռ - Մ ա թ գ ա ռ յ ա ն, Բ. Ա վ ա գ յ ա ն. «Սև բերդ» հուշարձանի բնակատեղին և դամբարանադաշտը.– Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական չորրորդ գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 10:

կական հատուկ եղանակի կիրառում<sup>15</sup>: Եղանակ, որն ապահովում էր բերքի նվազագույն չափ անգամ հացաբույսերից որն է տեսակի համար տարվա անբարենպաստ լինելու պարագայում: Հոռոմի հնավայրում կյանքի անընդմեջ ընթացքը հիմք է տալիս ենթադրելու, որ մի քանի հարյուրամյակ ավանդորեն կիրառված ագրոտեխնիկական այս շահեկան միջոցառումը պահպանվել է և Աքեմենյան շրջանում:

Տուշպա-Ռուսախինելեից (Թուրակկալե) հայտնաբերված շարացան արորի խոփը վկայում է, որ Վանա լճի ավազանում շաղացանին զուգընթաց (ըստ ազգագրական նյութերի մինչև XX դ. սկիզբը) կիրառվել է անջրդի հողերի մշակման վաղագույն միջոց՝ շարացան համակարգ<sup>16</sup>: Այս համակարգը Տիր դիցանունով կոչվել է «տիր դնել» այսինքն՝ «ծիր քաշել, ակոսել և ծիր ակոսի մեջ ձեռքով ցանել, շարացան կատարել»: Մա «խոնավություն պահպանող», «ջուր խնայող, երաշտից չվախեցող», երաշտի դեմ պայքարող զարգացած երկրագործական եղանակ էր՝ անջրդի տեղերում ցորենի, հատկապես, ընտիր տեսակներ աճեցնելու համար: Իրավամբ, «դիր/տիր» անունով է կոչվել «ցամաք տեղերում ցանելի» ընտիր կարմրահատ-մեծահատ ցորենը<sup>17</sup>: Երաշտադիմացկուն «տիր դնել» շարացան համակարգը մշտապես ապահովում էր հացահատիկի բավարար բերք:

Այսպիսով՝ քննվող ժամանակաշրջանում ևս ակներև է՝ առավել վաղ յուրացված ագրոտեխնիկական հնարների ավանդաբար փոխանցման անընդմեջ ընթացք:

Ոռոգելի տարածքների վարն ու հերկը իրականացվել են երկայթե խոփ ունեցող արորներով (գործածվել են նաև մետաղե ծայրով բրիչներ), հունձն ու խոտհարքը՝ երկայթե մանգաղներով և սրանց՝ գերանդի հիշեցնող, խոշոր նմանակներով: Հատկապես լեռնային շրջաններում ավանդաբար շարունակվել է քարե ծայրապանով բրիչների և կայծքարե ներդիրով բաղկացուցիչ-պահանգավոր մանգաղների գործածությունը: Կալսել են, հավանաբար, վանակատե ներդիրներով ագուցված կամերով, հատիկը մանրացրել են քարե տրորիչներով ու ձեծել սանդերում, աղացել են ավանդական մակույկաձև, ինչպես նաև նորահայտ, դեռևս սակավ գործածվող, վերին քարի վրա լծակն ագուցելու երկայնակի ակոսառովակ ունեցող լծակավոր աղորիքներով<sup>18</sup>:

Հացամթերքը (հացահատիկը, ձավարեղենը, այլուրը) ամբարվել է մեծ կարասներում և տարողունակ հորերում: ԳՊՀ-ի ամրոց-բնակավայրերում բացված հորերը բազմաձև են՝ գլանաձև, հատած կոնաձև, երկարաձիտք կոշկաձև: Սրանց ներքին մակերևույթները կավե լուծույթով խնամքով սվաղված են, հորերի բերանը

<sup>15</sup> Л. М и р з о я н, И. Г а б р и е л я н, Р. Б а д а л я н, Л. Т е д е с к о. Палеоэтноботанические материалы Орома.– *Հին Հայաստանի մշակույթը*, XI, էջ 47–49:

<sup>16</sup> Վ. Հ. Բ դ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 251–265, Գ. Գ. Բ ո չ ա թ յ ա ն. Տիր/Տիր սաստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում.– *ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ»*, 2005, -1, էջ 132–133:

<sup>17</sup> Ղ և ո ն դ Ս լ ի շ ա ն. Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ, 1985, էջ 624:

<sup>18</sup> Մանրամասն տե՛ս Բ. Ա. Կ ա թ ա պ է տ յ ա ն. *նշվ. աշխ.*, էջ 51–54:

քարերով բոլորշի շարված և կլոր սալով ծածկված: Հացը թխել են թոնիբրներում ու պայտաձև սաճերով՝ քարաշար օջախների վրա<sup>19</sup>:

Ավանդական բուսահավաքչության, բանջարաբուծության և այգեգործության բնագավառներում լայնորեն կիրառվել են քարե ծայրապանով բրիչներ, երկաթե տարատեսակ դանակներ ու մանգաղաձև հոտոցներ:

Ոռոգելի տարածքներում, անտարակույս, շարունակվել է աճեցվել, վանտոսայան սեպագիր աղբյուրներում հիշատակվող Ազա բարեբեր երկրի շտեմարաններում բացահայտված՝ գարին, ցորենը, վարսակը, կորեկը, քնջութը, ոսպը, նուտը, ձմերուկը, սալոր-ալոճը, բալը, խնձորը, տանձը, ընկույզը, նուռը, սերկնիլը, դեղձն ու խաղողը<sup>20</sup>: Ընդ որում, Կուր-արաքսյան միջագետքի մ. թ. ա. VI-IV(V-III) դդ. հուշարձաններում ի հայտ են եկել մշակաբույսերի՝ ցորենի, գարու, կորեկի, ձիթապտղի, ընկույզի, խաղողի, նռան, սերկնիլի մնացորդներ<sup>21</sup>: Վերջիններս՝ շրջակա անտառներում մրգատու բազմազան ծառատեսակների առկայության պայմաններում, այգեպտղաբուծության զարգացման արգասիք են: Կուրի աջափնյակի՝ Սարի-թեփեի բնակավայրի կարմրաներկ խոշոր կարասներն ու մատնեքազարդ ընկանակները, Կարա-թեփեի՝ սև փայլեցված, տերևազարդ փիլյաներն ու խաղողի կորիզները, Արագածոտնի՝ Օշականի գինու սափորները, ընկանակները, Ազարակի հնավայրի՝ մ. թ. ա. VI-V դդ. արդեն ձևավորված, արտադրական, հնձանային ժայռափոր համալիրը<sup>22</sup> նախորդ շրջանից ժառանգված խաղողագինեգործության զարգացման ընթացքի վկայությունն են: Քննվող ժամանակի խաղողագինեգործության մասին գրավոր աղբյուրներում ուղղակիորեն վավերացված են առատորեն օգտագործվող հորած «անուշաբույր հին գինիների» և սրանց արտահանման մասին վկայություններ<sup>23</sup>: «Շատ թունդ» և «շատ ախորժելի ըմպելիք» բնորոշումով հիշատակված է նաև գարուց պատրաստված (դեռևս վանտոսայան ժամանակներից հայտնի) «գինի»<sup>24</sup>:

Մ. թ. ա. VI-IV դդ. բնակավայրերում առկա հնէաբուսաբանական մնացորդներում բացահայտված են նաև յուղատու բուսատեսակներ՝ ընկույզ, ձիթապտուղ, ինչպես նաև հայտնի է «քնջութի և դառը նշի և բնեկնի(բնեկնյա պիստակենու – Գ.

<sup>19</sup> Սաճերի մասին տե՛ս Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Անտիկ շրջանի խոհանոցային խեցեղենի գործառական որոշ խնդիրների շուրջ.– Գիտական աշխատություններ, V. Գյումրի, 2002, էջ 105-110:

<sup>20</sup> А. А. М а р т и р о с я н. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 96.

<sup>21</sup> О. Ш. И с м и з а д е. Раскопки холма Кара-тепе в Мильской степи.– Материалы и исследования по археологии СССР, 1 125. М.–Л., 1965, с. 219, 221, 222; Д ж. Х а л и л о в. Նշվ. աշխ., էջ 164-165:

<sup>22</sup> Д ж. Х а л и л о в. Նշվ. աշխ., էջ 31, 116: О. Ш. И с м и з а д е. Նշվ. աշխ., էջ 216-217, 221: С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг. Ереван, 1988, с. 39-40; Գ. Մ. Թ ո լ մ ա յ ա ն. Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, 2008, էջ 29:

<sup>23</sup> Անաբախի, IV, IV, 9, IV, V, 29; Г е р о д о т. История в девяти книгах. Пер. и прим. Г. А. Стратановского (այսուհետև՝ Г е р о д о т). Л., 1972, I, 194; տե՛ս նաև՝ Р. С. П а л а н д ж я н. Виноделие в древней Армении.–Природа, 2000, № 8, с. 56-60.

<sup>24</sup> Անաբախի, IV, V, 26, 27; Տե՛ս նաև՝ Զ. Ղ ա ս ա թ յ ա ն. Թեյլեքափնիի (Կարմիր բլուր) երկրագործական մթերքների վերամշակման հարցի շուրջը.– ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1959, -9, էջ 77-86:

Ք.) յուղի»<sup>25</sup> առօրյա գործածության մասին գրավոր վկայություն: Հնագիտական նյութի և գրավոր աղբյուրների հետազոտությունների արդյունքները հաստատում են ձիթահանության մշակույթի զարգացման տևականությունը Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. II հազ.՝ ընկույզ ու նուշ՝ Արցախում, կտավատ, պիստակենի, ձիթապտուղ՝ Ծոփքում ու հարակից շրջաններում, իսկ մ. թ. ա. I հազ.՝ քնջութ՝ Արարատյան հովտում, Վանա լճի և Արածանիի ավազաններում)<sup>26</sup>:

Քննվող ժամանակաշրջանի հուշարձանների պեղումներով բացահայտված ոսկրաբանական նյութի հնէակենդանաբանական ուսումնասիրությունը հավաստում է ընտանի կենդանիների (կով/ցուլ, ոչխար, այծ, խոզ, էջ, ձի, ուղտ, շուն) և թռչունների (հավ/աքաղաղ, սագ) բուծման փաստը և հաստատում Հերոդոտոսի՝ «անասուններով հարուստ արմեններ» բնորոշումը<sup>27</sup>: Այս իրողությունը վկայված է նաև Քսենոփոնի «Անաբասիսում»՝ հայկական «տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը»<sup>28</sup>: Անասնապահական մթերքի (կաթ, բուրդ, կաշի, միս) մշակման միջոցները (տարատեսակ կաթնամաններ, ձուլակներ, խուրի մկրատներ, դանակներ, թեշիկի գլխիկներ, մանածագործական դազգահի կախիկ ծանրոցներ, կտուտիկներ, հերյուններ, քերիչներ, ծակիչներ, մախաթներ) և բուծվող կենդանիների բացահայտված կազմը հնարավորություն են ընձեռում վերականգնել տվյալ ժամանակաշրջանի անասնապահության զարգացման մակարդակի նկարագիրը – բնակչության ներքին պահանջները բավարարող՝ սննդամթերք և արհեստագործական հումք<sup>29</sup> մատակարարող անասնապահություն<sup>30</sup>:

Ոսկրաբանական հետազոտություններով հաստատված է, որ Հայկական լեռնաշխարհը դեռևս մ. թ. ա. IV հազ. «ձիու ընտանեցման օջախ» էր, իսկ մ. թ. ա. III-II հազ. այստեղ առկա է ձիերի կազմի բազմազանություն («բեռնակրից» - «հեծ-

<sup>25</sup> Անաբասիս, IV, IV, 13.

<sup>26</sup> Г. Н. Лисицына, Л. В. Прищепенко. Палеоэтноботанические находки Кавказа и Ближнего Востока. М., 1977, с. 68; А. В о б о к х у а н. Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr. Band 1. Oxford, 2008, S. 81-84 und etc; Զ. Ղ ա ա ա բ յ ա ն. Զիթագործությունը Ուրարտուում.– ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1957, № 4, էջ 107-116:

<sup>27</sup> Г е р о д о т, V, 49.

<sup>28</sup> Անաբասիս, IV, V, 25.

<sup>29</sup> Քսենոփոնի վկայությամբ հույն զինվորները կրում էին «եզան նոր քերթած կաշուց» պատրաստված կոշիկներ. տե՛ս Անաբասիս, IV, V, 14:

<sup>30</sup> Տե՛ս Կուր-արաքսյան միջագետքի, ԳՊՀ-ի, Սևանի հարավային ավազանի, Շիրակի գոգավորության, Արագածի լեռնազանգվածի, Փամբակ-Բազումի միջլեռնային հովտի ամրոց-բնակավայրերը (Օ. Ս. И с м и з а д е. Նշվ. աշխ., էջ 212-222: Ս. А. Е с а я н. Նշվ. աշխ., էջ 174-175: Ի. Ա. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 42, 53, 56-57, ն ու յ ն ի՝ Կարճաղբյուրի պեղումները.– ՊԲՀ, 1979, -3, էջ 268-277, Մ. Թ ո ռ ո ս յ ա ն. Օ. Իս. Իս ն կ ի կ յ ա ն, Լ. Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն. Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, 2002, էջ 122: А. Т. S m i t h, R. B a d a l y a n, R. A v e t i s y a n, M. Z a r d a r y a n. Early Complex Societies in Southern Caucasia: A Preliminary Report on the 2002 Investigations by Project ArAGATS on the Tsakahovit Plain, Republic of Armenia.– American Journal of Archaeology, vol. 108, 2004, № 1, p. 26-27, 32 and etc; Լ. Փ ա ա լ ա ն. Թագավորանիստի մ. թ. ա. VII – V դդ. իսցեղենի շուրջ.– Հին Հայաստանի մշակույթը, XIV, Երևան, 2008, էջ 177):

կան») և քանակական մեծ աճ<sup>31</sup>: Գրավոր վկայված է, որ մ. թ. ա. VI դ. կեսերին Հայտն թագավորի տրամադրության տակ կար արքունի հեծելազոր<sup>32</sup>: Աքեմենյան սատրապության շրջանում, ըստ անտիկ հեղինակների՝ «ձիաբուծման արտոններով... այնքան հարուստ երկրում», բուծվում էին՝ Պարսից «արքայի համար իբրև տուրք», պարսկականներից փոքր, «բայց ավելի աշխույժ ձիեր» և ամեն տարի՝ Միհր աստծու տոնախմբության կապակցությամբ, Պարսից արքային էր ուղարկվում արքունիքում հարգի Նեսայան կոչվող ձիերի «երկու բյուր մտրուկ»<sup>33</sup>: Քննվող ժամանակաշրջանի ձիաբուծությանը վերաբերող հնագիտական տվյալները (ձիասարքերի մանրամասներ, հեծյալի և ձիու առաջամասով եղջերավորներ)<sup>34</sup> և վերը բերված վկայությունները բավարար հիմք են՝ 3-4 հազարամյա զարգացման ուղի անցած ձիաբուծության նոր, առավել բարձր մակարդակ փաստելու համար:

Հնէակենդանաբանական նյութի ուսումնասիրությամբ բացահայտված «մորթատու» ու «մսատու» վայրի տարատեսակ կենդանիների (եղջերու, կիստար, կովկասյան արջ, վարազ, գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, աքիս, լուսան, այծյամ, քարայծ, շնագայլ) և ձկների (ծածանազգիներ, թառափազգիներ...), ինչպես նաև հնագիտական գտածոների շարքում գենքի ու որսի պարագաների (դանակ, դաշույն, նետասլաք, տեգ, նիզակ... կեռիկներ, ցանց հյուսելու ասեղներ, կախիկ-ծանրոցներ, ցանցը ջրում պահող խարիսխներ)<sup>35</sup> առկայությունը վկայում է տնտեսության մեջ որսորդության և ձկնորսության ավանդաբար պահպանվող դերի կարևորությունը:

Տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի լեռնաշխարհի տնտեսական իրավիճակի սպառնիչ պատկեր է տրված Քսենոփոնի «Անաբասիտում»՝ հայկական գյուղերում հյուրընկալված հույն զինվորներն «արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն. մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին զինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն... խոզաճարպ և քնջութի և դառն նշի և բնեկնի յուղ... կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների մեջ գարուց պատրաստած զինի... չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գա-

<sup>31</sup> Մ. Կ. Մ ե ժ լ ու մ յ ա ն. Ձիու ընտանեցման հնարավորությունը Հայկական լեռնաշխարհում. – Հայաստանի Հանրապետությունում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Ձեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ). Երևան, 1991, էջ 46-47, ն ու յ ի՝ Լոռի բերդի դամբարանադաշտի հնէակենդանաբանական նյութը (1989-1990). – ԴՀԱԱ. Երևան, 1991, էջ 45-46, տե՛ս նաև՝ Ա. Բ ո թ ո խ յ ա ն, Ձիւ/էշը Օռփքի պատմամշակութային համատեքստում. – Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, Երիտասարդ գիտնականների IX նստաշրջան, Ձեկուցումների հիմնադրություններ, Երևան, 1999, էջ 13-15: Վանտոսայան ժամանակաշրջանի ձիաբուծության մասին տե՛ս Բ. Բ. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 151-157.

<sup>32</sup> К с е н о ф о н т. Киропедия. Издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролов. М., 1976, III, I.

<sup>33</sup> Անաբասիս, IV, V, 24, 34-36: Մ տ ր ա բ ո ն. Աշխարհագրություն. Մ. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ (այսուհետև՝ Strabo). – Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1, Երևան, 1981, XI, 14, 9:

<sup>34</sup> Բ. Ա. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 70-72:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 57, 60 և այլն: Н. И. Б у р ч а к - А б р а м о в и ч. Материалы к изучению птиц древнего Мингечаура. – Материальная культура Азербайджана., т. X. Баку, 1987, с. 128.

ռան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, *մեծ քանակությամբ* ցորենի ու գարու հացի *հետ»*<sup>36</sup> (ընդգծումները մերն են – Գ. Ք.):

Ավանդաբար շարունակվող ինքնաբավ բնատնտեսական կացութաձևի փոխառնչություններում ուրվագծվում են բնամթերքի հավելյալ արտադրանքի՝ որպես ապրանք արտահանելու միտումներ. այսպես, «փյունիկյան» հայտնի պիտակավորումով հայկական ադանդերային «անուշաբույր գինիների» արտահանումը Բաբելոն<sup>37</sup>:

Գրավոր վկայությունների և դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքները<sup>38</sup> հավաստում են, որ վարչատնտեսական գործառույթ իրականացնող կենտրոնի (տեղապահ իշխանավորի ապարանք-նստավայրի, իշխանանիստ ամրոց-բնակավայրի, մեհենական կենտրոնի և այլն) շուրջ ամփոփված էին տարածքային և տնտեսական կապերով միավորված գյուղական համայնքներ:

Քննվող ժամանակաշրջանի գյուղատնտեսության զարգացման առավել ամբողջական և ավարտուն պատկերի վերականգնման համար, անշուշտ, պահանջվում է հնագիտական տեղեկատվության լուրջ համալրում Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքից: Այնուհանդերձ, հիմնականում, Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում և մասամբ հարակից շրջաններում ցարդ կատարված հնագիտական հետազոտությունների (անգամ ոչ բավարար) արդյունքները հիմք են տալիս անել որոշակի եզրահանգումներ.

– Վանի թագավորության կործանումով պայմանավորված անկում ապրած գյուղատնտեսությունը Երվանդունիների գահակալության առաջին շրջանում վերագտավ իր նշանակալի դերը պետականության կայացման գործընթացում,

– սաստրապության ժամանակաշրջանում՝ պետականության ժամանակավոր կորստի պայմաններում, երկրի տնտեսության իրավիճակը հիմնականում պահպանվում է: Ակնհայտ է բնակչության կենսապահովման հիմնական բնագավառների՝ երկրագործության և անասնապահության ավանդական եղանակների զարգացման շարունակական ընթացքը:

Քննվող ժամանակաշրջանում ստեղծվեցին տնտեսական ու քաղաքական բեկումնային զարգացման համար վճռորոշ նախադրյալներ՝ Երվանդունիների երկրորդ թագավորության շրջանում պետականությունը վերականգնելու և Արտաշիսյանների օրոք առավել ամբողջական, առավել հզոր պետական կառույց կերտելու համար:

<sup>36</sup> Անաբասիս, IV, IV, 9, 13, IV, V, 26, 31.

<sup>37</sup> Геродот, I, 194; տե՛ս նաև՝ Р. С. П а л а н д ж я н. Նշվ. աշխ., էջ 56-60:

<sup>38</sup> Անաբասիս, IV, IV, 7. Սևանի ավազանի հարավային (Մասրիկ և Արգիճի գետերի միջև) մի լայն գոտու սույն ժամանակաշրջանի խեցեղենի վիճակագրական տվյալները փաստում են գյուղմթերքի մշակման և օգտագործման «բաց» անոթների գերակշիռ քանակ «շարքային» բնակավայրերում. պահեստավորման ու տեղափոխման «կիսաբաց» անոթների բազմաքանակություն՝ ամրոց-կենտրոններում (Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Հետուրարտական խեցեղենի ուսումնասիրության փորձ.– Հին Հայաստանի մշակույթ, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2002, էջ 58-59):



---

СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО АРМЕНИИ  
В VI – IV ВВ. ДО Н. Э.

*Г А Я Н Э К О Ч А Р Я Н*

Р е з ю м е

Сравнительный анализ данных археологии, палеоботаники, палеофауны и письменных источников дает представление о процессе развития сельского хозяйства Армении VI–IV вв. до н. э. – восстановление основных каналов ирригационной сети предшествующих времен, применение ранее освоенных специальных агротехнических мероприятий, возделывание зерновых, садовых, огородных, технических культур, развитие традиционных отраслей – виноделия, пивоварения, маслоделия, а также скотоводства, птицеводства и коневодства – снабжающих продуктами питания и ремесленного сырья. Традиционно продолжается натурально-хозяйственный уклад жизни сельских общин, объединенных вокруг административно-хозяйственного центра.

THE AGRICULTURE OF ARMENIA  
IN THE 6th – 4th CENTURIES B. C.

*G A Y A N E K O C H A R Y A N*

S u m m a r y

The comparative analysis of archeological, palaeobotanical, palaeozoological and written sources data sheds light on the process of development of agriculture in the given period of Armenia. All the facts point to the recovery of the basic channels of irrigational network of previous times, the application of special agrotechnical measures, the cultivation of grain, horticultural, technical crops and vegetables, the development of traditional branches of viniculture, brewing, oil producing as well as cattle-breeding, poultry breeding and horse breeding – supplying with foodstuff and craft raw materials. The natural-economic way of life of rural communities united round the administrative centre is being traditionally proceeded.